պէտք ստորնանալ բարձրացան, որոնք Տրէյֆիւսի կարեւոր վկայք էին։ — Պոօլ զօրապետին յանկարծական մահը չփոխեց տէրութիւնը, որ թէպէտ կը ստանձնէր անոր մեծ պաշտաման յարմար և արժանաւոր անձ գտնելու, բայց խնդիրը կարճ կապելու համար Տըլաման հաստատեց։ — Ալճերիոյ հակահրէական յուզմունքներն չեն դադրիր։ — Առ այժմ Գաղղիոյ մէջ գէթ առերեւոյթ խաղաղութիւն է, թէպէտ զանազան պաշտօնէից դատաստան կ'ըլլուի. — Կալլիֆէ զօրավարն ալ ամբաստանուեցաւ՝ իբրեւ թէ Օռլէանի դքսին հետ յարաբերութեան մէջ է։ — Բանակին անհրահանգ ըլլալն կը տեսնուի Լուպէ նախագահին դէմ եղած նախատինքէն ի Մոնթէլիմար, ուր է Լուպէյի տունն։ Կալլիֆէ քննեց խնդիրը և հաստատեց՝ որ առաջուընէ պատրաստուած գործ է, և անոր մէջ մասն ունին զինուորականք։ Կալլիֆէի դէմ դաւադրութիւնք կ'ըլլան՝ որպէս զի բանագնացուի պաշտօնարանէն ելլելու։ — ՎԻՆԵՑՈՒԷԼԱՅԻ մէջ ալ խռովութիւնը սաստկացաւ. Քասթրօ, ապստամբաց գլուխն, հասարակապետութեան մայրաքաղաք՝ Քարաքասին տիրեց, և անխուսափելի կ'երեւի պատերազմը։

# ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

**ԱԶԳԱՅԻՆ** հարուստ Ա. Ծատուրեան «Բանասէր» հանդէսին նուիրած է 10 անգղ. ոսկի։ Վարդուհի Խօջամիրեան 1000 րուբլի կտակած է «Մուրճ»ի, 400 րբ. Գաթումի մի եկեղեցւոյ, 100 րբ. ուրիշ եկեղեցւոյ, և 500 աղքատ ընտանիքի մը։ Խարբերդէն օտարազգի Տ. Ժէյմս Ակնա թշուառ և անտնակ ազգայնոց 300 ոսկի խաւրած է։ Նիւ-Եորքի ազգայինք յանդէս մը կատարելով Վասպուրականի սովելոց 40 անգղ. ոսկի խաւրած են։ Ամերիկայի Սէլըմ քաղաքի 50ի չափ ազգայիններ՝ 1895էն սկսեալ՝ մինչեւ այս տարի, 848 տոլարով օգնութեան հասած են արեւելքի հայ սովելոց։ Մկրտիչ Աթանասեան մարդասիրական մեծ գործ մը կը տեսնէ. 60,000 րուբլի կը նուիրէ Թիֆլիզի մէջ քաղաքական հիւանդանոց մը հաստատելու համար։ Ռուս. Բարձ. Վեհ. Ցարը հայ կարօտելոց նուիրած է կէս միլիոն րուբլի. ըստ Լարմէնի խմբագրին մի բնիոն անտի չէ հասած մեր թշուառներուն։ — Ի նպաստ հայ որբերու Մոսկուայի Ժամհարեան եղբայրները 10,000 րբ. նուիրած են։ Հանգուցեալ Մ. Փրիդոնեան 10,000 րբ. կտակեր է, որով ազգային եկեղեցիներու մէջ երգեցիկ խումբեր պիտի կազմուին։ — Նոյն հանգուցեալը 1000 րբ. ալ նուիրած է ազգային որբերուն։

— Եղիշէ Դուրեան Եպիսկոպոսի անտիպ երկերն են, կրօնից պատմութիւն, ընդարձակ գործ։ Դիցաբանութիւն. [ազգա՞յին թէ ընդհանուր ազգաց]։ Հայ–Եկեղեցական պատմութիւն քննական։ Հայ–Մատենագրական Պատմութիւն (կիսատար)։ Տաղաչափութիւն։ Զանազան քերթուածներ։ Ստուգաբանական բառարան, բանասիրական բոլորովին նոր ոճով։ Այս երկերէն Արմաշի Դպրէվանքի Սրբազանին սաները միայն կ'օգտուին, ուսկից ամբողջ հայ հասարակութիւնն ալ կ'օգտուի, եթէ տպագրութեան դժուարութիւնները մեղմանան։

— Զիքակոյի համալսարանին մէջ ատամնաբոյժ Ն. Խարազեան, բժիշկ Ա. Սիսակեան և փաստաբան Գ. Կօլճիւքեան, յաջողակ քննութեամբ վկայականներու արժանացած են, և բազմաթիւ ամերիկացի աշակերտաց մէջ այդ հայերն ամենէն առաջիններէն հանդիսացած են։

— «Բանասէր»ի հմուտ խմբագիրն Կ. Յ. Պասմաճեան հրատարակած է հետեւեալ երկու տետրակներն 1. «Une nouvelle inscription Arméniaque ou vannique» 2. «Une nouvelle inscription byzantine». Երկուքն ալ բանասիրաց համար հետաքրքրական տետրակներ են։

— Տփղիսի առեւտրական տունը Եղբ. Ծովիանեան և ընկ. արտօնութիւն առած են 25 տարի Սեւանայ լճին վրայ նաւագնացութիւն հաստատելու։

— Օգոստոս 15ին զուժեցաւ Գրիգորիս Արք. Ալէաթճեանի մահն (1840–1899)։ Հանգուցեալը ոչ միայն ընտիր ու գործօն եկեղեցական մը կը զնահատուի այլ նաեւ ազգային գրականութեան սատարող մը իւր հրատարակած «Թռչնիկ Պեգասեան» կիսամսեայ թերթով։ 1895ին Սսի կաթողիկոս ընտրուած է բայց այդ պաշտօնավարութեան չէ հասած։

— Գ. Կ. Եզեան ազգային ծանօթ բանասէրը ուրուն բարեկամական այցելութիւնը մի քանի շաբաթ առաջ վայելեցինք, այս ամսոյ մէջ գտնուեցաւ ի Հռոմ իբրեւ ռուսական պատուիրակ և նախագահ իրանեան լեզուաց Արեւելագիտաց համաժողովին։ Գ. Եզեան այդ կաճառականաց ներկայութեան բանախօսած է իւր «Մեծն Պետրոս և Կովկասի հայոց յարաբերութեանց վրայ» անուն գրքին վրայ։

— 1900ի ցուցահանդէսին ի Փարիզ կը կատարուի միջազգային եկեղեցական և պատմական ժողով մը, այժմէն վաճառականութեան նախարարը այդ ժողովին կը հրաւիրէ մասնակցելու հանրածանօթ ազգայինը՝ Մ. Ջերազը։

— Հայութեան որբերուն, մեծ Մեկենասին Ռուս. Ջահնշեանի 25 ամեայ գրական յոբելեանը պիտի կատարուի. այս առթիւ անշուշտ հայ որբուկներուն հետ ընդհանուր հայութիւնը կը յայտնէ յոբելեարին ի սրտէ շնորհակալութիւն։

— [Նամակ «Բազմավէպ»ի խմբագրութեան]։ Հայկական համերգն Պարիզի համաշխարհային ցուցահանդիսում։ — Ս. Պետերբուրգի «Մարինեան» կայսերական թատրոնի օպերային երաժշտական խմբի ուսուցիչ և ղեկավար տաղանդաւոր երաժիշտ

digitised by A.R.A.R.@

«Գ. Գիորգի Ալէքսէիւիչ Կազալչէնկօի» Նախաձեռնութեամբ (հայ երիտասարդներից) պիտի կազմուի քառաձայն, օրինակելի երգեցիկ մի խումբ: Յարգելի երաժիշտ Կազանչէնկօի ղեկավարութեամբ՝ այդ երգեցիկ խումբը հայկական ժողովրդական, Ազգային և եկեղեցական երաժշտական համերգեր պիտի տայ առաջիկայ 1900 թ. Պարիզում տեղի ունենալիք համաշխարհային ցուցահանդիսում: Երգեցիկ խմբի անդամների ընտրութեան, պարապմանց, տեղի և այլ պայմանների մասին մանրամասնաբար կ'յայտնուի ընթերցողներին մի ուրիշ անգամ: Ուստի՝ այս ուրախալի և ամեն մի հայ մարդու խորին ուշադրութեան արժանի լուրը հաղորդելով յարգելի ընթերցող հայ հասարակութեան, յոյս ունիմ, որ ամեն մի հասկացող, բանիմաց և պարտաճանաչ հայ, իւր բարոյական և նիւթական աջակցութիւնը չպիտի խնայի այս գեղեցիկ գործի յաջողութեան գործին:

— Առոր նման մի ուրիշ լուր մ'ալ կու տայ Անահիտ, թէ Գ. Բիէռ Օպռի արեւելագէտ, յառաջիկայ ձմեռ երեք բանախօսութեամբ պիտի ներկայացնէ հայկական երաժշտութիւնը (եկեղեցական և ժողովրդական) Փարիզի նուագասէրներուն: Գ. Եղիազարեանցի ծրագիրն է որ կը սկսի իրագործուիլ: Բանախօսութիւններուն պիտի ընկերանան շարականներու խմբովին երգեցողութիւններ՝ զոր պիտի կատարեն Ս. Ժէռվէի հռչակաւոր երաժշտապետ Գ.՛ Շառլ Պորտի երգիչները, և «սօլօ»ները պիտի երգէ Գ. Եղիազարեանց:

— Նոր հայերէնագէտներ. — Այս վերնագրով քանիցս առիթ ունեցանք խօսելու «Բազմավէպ»ին մէջ, Փարիզի Արեւելեան կենդանի լեզուաց վարժարանին մէջ հայերէնի հետեւող Ֆրանսացի ուսանողաց վրայ: Այսօր ալ կը դնենք, նոյն վարժարանի 1898–1899ի պաշտօնական ցուցակին համեմատ, հայ լեզուի և պատմութեան հետեւող աշակերտաց անցուցած քննութեանց արդիւնքն: Քննութիւնք կատարուած են բերանացի և գրաւոր:

Ա. ՏԱՐԻԷՆ

| | | |
|---|---|---|
| Berthe | Faible | Non admis en 2e année |
| Couturat | Bien | Admis » » |
| Cuvillier-Fleury | Assez-bien | » » » |
| Lelorrain | Passable | » » » |
| Quentin | Faible | Non admis » » |
| Sevin | » | » » » » |
| Simon | Passable | Admis » » |

Բ. ՏԱՐԻԷՆ

| | | |
|---|---|---|
| Bourdonneau | Bien | Admis en 3e année |
| Folquet | Passable | » » » |
| Hérigny | » | » » » |
| Lasson | Assez-bien | » » » |
| Wallace | » | » » » |

Գ. ՏԱՐԻԷՆ

| | | |
|---|---|---|
| Aubry | Très-bien | Proposé pour le diplô- |
| Feillet Pilatrie | Bien | » » (me. |
| de Latude | Assez-bien | Ajourné » » |

Ինչպէս կը տեսնուի այս պաշտօնական ցուցակէն, երկու վկայեալ հայերէնագէտներ եւս աւելցան մեր աղքատիկ գրականութեան մշակման և անոր զարգացման նպաստող: Իսկ առոր հակառակ՝ երկու հատ մերժուած են երկրորդ դասարանն ընդունուելու համար: Ընթերցողք կը յիշեն անշուշտ, թէ այս երկու յետամնաց աշակերտներէն մին՝ Berthe անցեալ տարի ալ չէր կրցած անցունել իր քննութիւնն. ուստի՝ այս երկրորդ տարին է որ կը մերժուի:

— Հայ անուանի նկարիչ Արշակ Ֆէթվաճեանի պատկերահանդէսը Պաթումի մէջ բացուեր է: Նկարչիս վրայ անցեալ տարուան «Բազմավէպ»ին (էջ 501) մէջ խօսած ենք:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԵՄ. Հ. Ս. — Մ. Մամուրեան . . . 493
ՋՐԱՔԵԱՆ Հ. Ք. — Իմաստունն Խիկար . . 495
ԷՓՐԻԿԵԱՆ Հ. Ս. — Այրարատ . . . 497
ՏԻՐՈՅԵԱՆ Հ. Ա. — Ասորական և հայկական տաղաչափութիւն . . . . . 502
ՊՐՕՖ. Ն. ՄԱՌ. — Անի . . . . 506
ՂԱԶԻԿԵԱՆ Հ. Ա. — Մխիթար . . . 509
ԵՐԵՄ. Հ. Ս. — Հանք և իրենց ստուգաբանութիւնը . . . . . . 511
ԱՃԱՌԵԱՆ Հ. Յ. — Սուչավայի բարբառ. . 516
ՍԱՐԵԱՆ Հ. Ս. — Մագնիսական քուն . . 519
ԲԱՍՄԱՋԵԱՆ Յ. Կ. — Գերեզմ. հանուած ձեռագիր մը . . . . . . 523
Յ. Ս. — Մաղնիսա . . . . . . 524
ՏԱՆԴԷ — Դժոխքին տունը. և այլն – Թրգմ. ՂԱԶԻԿԵԱՆ Հ. Ա. . . . . . 526

Գրախօսական ակնարկներ

ՍԱՐԵԱՆ Հ. Ս. — Նոր ընթերցարան . . 530
» » — Դժբախտ կին . . . 530
ՌՈՒՍՆԵԱՆ Հ. Վ. — Ազգային կրթարան–որբանոց . . . . . . . 530
Անթել հեռախօսը նաւերու համար . . 531
ԵՐԵՄ. Հ. Ս. — Հանդէս Հանդիսից – Անահիտ. – Ծաղիկ. – Բիւզանդիոն. – Բիւրակն. – Մշակ. – Նոր դար . . . 532
Քաղաքական ամիս . . . . . 538
Ազգային արձագանգ . . . . . 539

digitised by A.R.A.R.@